«Մանկական քաղաք» բազմաֆունկցիոնալ համալիրի կառուցման ներդրումային ծրագիր

Ծրագրի նկարագիրը

Ծրագրի նպատակն է Երևանում կառուցել համաքաղաքային նշանակություն ունեցող, յուրօրինակ լուծումներով բազմաֆունկցիոնալ համալիր տարբեր տարիքային խմբերի երեխաների համար:

Համալիրը կներառի՝

- ժամանակակից մանկական խաղահրապարակներ,
- մարզահրապարակ,
- ատրակցիոններ,
- կինոսրահ,
- թատրոն,
- անվաչմշկային հարթակ,
- ռոբոտների սրահ,
- հայելիների սրահ,
- ճոճանակներ,
- մանկական հագուստի խանութ-սրահ,
- խաղալիքների խանութ-սրահ,
- մանկական սրճարան

Համալիրը այցելուներին կառաջարկի ժամանցի հետաքրքիր տարբերակներ, ինչպես օրինակ՝ ճամփորդություն կախարդական հայելիների աշխարհում, այցելություն ռոբոտների անիմացիոն սրահ, կլինի թատերական ներկայացումների համար նախատեսված հարթակ, որտեղ երեխաները կարող են բեմադրել իրենց պատրաստած ներկայացումները:

Համալիրը կհանդիսանա սիրելի վայր և՛ բնակիչների, և՛ զբոսաշրջիկների

համար: Համալիրում կառաջարկվեն բոլոր հարմարությունները երեխաների ժամանցն ուրախ և բազմակողմանի անցկացնելու համար:

«Մանկական քաղաքում» նախատեսվում է երեխաների համար կազմակերպել ուսուցողական ծրագրեր: Երեխաները խաղերի տեսքով իրենց կփորձեն տարբեր մասնագիտություններում:
Կենտրոնի առաջին հարկում նախատեսվում է կազմակերպել երեխաների համար անվտանգ անվաչմշկային հարթակ, կգործի նաև մանկական սրճարան:
«Մանկական քաղաքի» երկրորդ հարկում կգործի զվարճանքների ժամանակակից ատրակցիոն կենտրոն, ինչպես երեխաների, այնպես էլ՝ մեծահասակների համար: Կկիրառվեն նորագույն համակարգչային և լազերային տեխնոլոգիաներ:

Տեխնիկական ցուցանիշներ

Տարածքի մակերեսը կկազմի՝ 14.000քմ, որից՝ ժամանցային և ուսուցողական ծրագրերի հարթակ՝ շուրջ 2500 քմ, անվաչմուշկային հարթակ՝ շուրջ 1500-2000քմ:

Ծրագրի ժամկետներ

Շինարարության տևողությունը՝ շուրջ 2 տարի:

Ծրագրի արժեքը

Շինարարության արժեքը կկազմի շուրջ 10 մլն ԱՄՆ դոլար:

Ներդրումների ձևը և հիմնական պայմանները

Ծրագիրը նախատեսվում է իրականացնել մասնավոր ներդրումների ներգրավմամբ:

Ներկա իրավիճակ

Առկա է հայեցակարգային նախագիծ: